ՍՏՈՒԱԾԱՄԱՐՏԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ ՀԱՅՈՑ ՄԷՋ ԺԳ. ԴԱՐՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐԵԱՆ
ashot.manucharyan.1959@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայ աղանդաւորութեան պատմութեան ուսումնասիրութիւնը ԺԳ. դարում երեւան է հանում նախադէպը չունեցող մի երեւոյթ, որ պայմանականօրէն կոչում ենք ***աստուածամարտական***, թէեւ այն կարելի է անուանել ***կրօնամարտական*** կամ ***հաւատամարտական***: Աստուծոյ, ընդհանրապէս հաւատի նկատմամբ ունեցած իր խիստ բացասական վերաբերմունքով այդ երեւոյթը հայ միջնադարեան աղանդաւորական գաղափարախօսութիւնների գագաթնակէտն է՝ ցարդ մեզ յայտնի նման շարժումներում, որ պատուհասել են Հայաստանը Դ.-ԺԹ. դարերում:

Այն իր հաւատամարտական արտայայտութիւններով աւելի ծայրայեղ է, քան ԺԷ. դարի Թումիկի աղանդի քարոզչական դրոյթները Նոր Ջուղայում: Բանասէր Թադէոս Աւդալբեկեանը, ըստ Խաչատուր Ջուղայեցու (՞-1792) *Պատմութիւն Պարսից* աշխատութեան ներկայացնելով դերձակ Թովմասի՝ Թումիկի կրօնական աշխարհայեացքի հիմնական կէտերը (Քրիստոս հաւասար չէ Հօրը, նա մարդ է, իսկ Ս. Կոյս Մարիամը՝ մարդածին, չէր հաւատում յարութեանը եւ դատաստանին, հայհոյում էր Փրկչի խաչը, մերժում պատարագն ու հաղորդութիւնը, զանց առնում առաքելական կանոնները, եօթ խորհուրդները, պախարակում, արհամարհում էր եկեղեցու առաջնորդներին, վարդապետներին, քահանաներին եւ այլ պաշտօնեաներին, նրանց խաբեբաներ կոչում), յանգում է այն եզրակացութեան, որ «*իսկապէս այս աղանդը* չարագոյն *էր, այսինքն աւելի արմատական էր, քան մինչ այդ երեւան եկած հայկական աղանդները*»[1] եւ «*ամէնից … ծախակողմեանն հայ աղանդների պատմութեան մէջ*»[2]: Պատմիչը Թումիկին կոչում է «*ոմն ժանդ եւ դժնաբարոյ», ով էր «ընդդէմ ուղղափառ հաւատոյս Քրիստոսի, որ էր առաւել չարագոյն եւ դժնդագոյն, քան զԱրիոս, զՆեստոր, եւ զսատուկեցիս…*»[3]:

Բայց այն, ինչ մենք մակաբերում ենք ԺԳ. դարի մի քանի աղբիւրների ժլատ ակնարկներից, աւելի չարարմատ է, քան Նոր Ջուղայի աղանդը:

ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Սսի Բ. ժողովի (1243) կանոնախմբի ԺԷ. կանոնի շարունակութիւնից իմանում ենք, որ ԺԳ. դարում հայ իրականութեան մէջ եղել են «*անօրէն յիշոցասացքն», «ասպուծոյ բարկութիւն շարժողքն», «աններելի անօրէնքն*», որ անարգել են «*զհաւատսն, զստեղծող, զկնունք, զիրեշտակ, զքահանայ, զբերան, զերես, զգերեզման եւ այլն...*»[4]: Ընդ որում, նոյն կանոնից իրազեկւում ենք, որ այդ չարիքները նոր էին բուսել[5]:

Հաւատ անարգելը մեզ յայտնի հայ միջնադարեան հասարակարգերում նոր երեւոյթ է: Իսկ չարիքների վերը թուարկուած շարքում առաջին հայեացքից անհասկանալի է, թէ անարգել «ստեղծող»՝ ու՞մ է նկատի առնուած, այսինքն՝ Սուրբ Երրորդութեան անձերից Հօ՞րը, թէ՞ Որդուն՝ Քրիստոսին՝ իբրեւ հաւատի, կրօնի ստեղծողի: Եթէ խօսքը Քրիստոսի մասին է, ապա նրան անարգելու երեւոյթը նոր չէր, քանի որ դա կարող էին անել բոլոր այն հերձուածների ու աղանդների մոլորեալները՝ Արիոսից սկսած, որոնք մերժում էին Որդու աստուածութիւնը: Քրիստոսին հայհոյող երկրորդ խումբը տարածաշրջանի մահմեդականներն էին, որոնք Նրա դէմ սաստկացնում էին յիշոցները յատկապէս խաչակրաց արշաւանքների ժամանակ:

Պատմական աղբիւրների յետագայ ուսումնասիրութիւնից, մասնաւորապէս Ձագավանքի 1270ի տեղական եկեղեցական ժողովի «Սահմանք»ի նախաբանից պարզւում է, որ ստեղծողի ներքոյ խօսքը վերաբերում է Հօրը՝ Արարչին. «...*առաւել անքաւելի մեղաւք եւ չարաչար հերձուածովք, որ քան զամ[ենայն] հերձուած լեղի է, մինչեւ զայս զի ժողովովք նզովեալ են չարագոյն յիշունցնատուքն, որ զամ[ենայն] մոռացեալ մեղք եւ չարիք յիշել տան Ա[ստուծո]յ, հր[եշտա]կաց եւ բոլորից սրբոց, եւ դողացուցեն զարարածս Ա[ստուծո]յ, եւ գարշելի եւ զազիր հոգով լնուն զերկիր*»[6]: Ըստ Գարեգին Յովսէփեանի՝ հայհոյութեան մասին այդ մասը «*ամբողջապէս բառացի կամ քաղուածօրէն հաւասար է Երզնկացու 'Յաղագս Յիշոցնատուաց' վերնագրով հատուածին*»[7]:

Աստծուն հայհոյելու երեւոյթն ունի աստուածաշնչեան արմատներ: Ա. Թագաւորութիւններ Գ. գլխի ԺԳ. համարում Աստուած Սամուէլ մարգարէին յայտնում է, որ Ինքը մինչեւ վերջ վրէժ պիտի լուծի Հեղի քահանայի սերնդից «*վասն անօրէնութեան*

որդւոց նորա, զի հայհոյէին զԱստուած որդիք նորա, եւ նա ոչ խրատէր զնոսա»[8]:

Պօղոս առաքեալը զգուշացնում է, որ հրեաների երկդիմի գործունէութեան պատճառով «*անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց* (Հռոմ. Բ. 24)»[9]:

Յովհաննու Յայտնութեան ԺԶ. գլխում երիցս խօսւում է մարդկանց կողմից Աստծուն հայհոյելու մասին, երբ Ամէնակալը եօթ հրեշտակների միջոցով իր ցասումն էր թափում երկրի վրայ.

- երբ մարդիկ խորշակահար էին արւում կրակով եւ այրւում սաստիկ տապից: Նրանք «*հայհոյեցին զԱստուած որ ունի իշխանութիւն ի վերայ հարուածոցս այսոցիկ. եւ ոչ ապաշխարեցին ի փառ Աստուծոյ*» (Յայտ. ԺԶ. 9)[10],
- երբ մարդիկ իրենց ցաւերի ու դառն ախտի պատճառով «*հայհոյեցին զԱստուած երկնից... եւ ոչ ապաշխարեցին ի գործոց իւրեանց*» (Յայտ. ԺԶ. 11)[11],
- երբ մարդիկ պատուհասւում են ահեղ երկրաշարժով ու նրանց վրայ երկնքից թափւում է քարէ կարկուտ. «*եւ հայհոյեցին մարդիկ զԱստուած յերկինս վասն հարուածոյ կարկտին զի մեծ էր հարուածն եւ սաստիկ*» (Յայտ. ԺԶ. 21)[12]:

Աստուածաշնչեան այս օրինակներից երեւում է, որ մարդիկ Աստծուն հայհոյում էին ամբարտաւանութիւնից, հեթանոս լինելուց եւ ծայրայեղ յուսահատութիւնից:

Ըստ Հին Կտակարանի՝ Աստծուն հայհոյողի դատաստանը քարկոծուելով սպանուելն էր:

Յովհան Օձնեցի Իմաստասէրն իր «Նորին Ընդդէմ Պաւղիկեանց» հակաճառութեան մէջ տուել է աստուածամարտութեան երեւոյթի ծագման, աստիճանական ընթացքի ու վերջնական ամբողջացման պատճառը. «*Ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն եւ ի քրիստոսատեցութիւն, եւ անտուստ յանաստուածութիւն եւ ի դիւապաշտութիւն*»[13]:

Հաւատից ու Աստծուց զատ, ինչպէս նշել ենք վերեւում, հայհոյատուներն ըստ Սսի Բ. ժողովի ԺԷ. կանոնի, հայհոյել են նաեւ «*զկնունք*»: Կնունքի, այսինքն մկրտութեան եւ նրա հետ կապուած դրոշմի խորհուրդների մերժումը նոր երեւոյթ չէր հայ միջնադարեան իրականութիւնում: Թէ՛ պաւլիկեանները (Զ.-Թ. դդ.), թէ՛ թոնդրակեցիները (Թ.-ԺԱ. դդ.) չէին ընդունում հայ

առաքելական եկեղեցու այն հայեցակէտը, թէ «*Եթէ մարդը Մկրտութեամբ Սուրբ Հոգին ընդունում է մաքրուելու, Աստծուն որդեգրուելու եւ սկզբնական մեղքը քաւելու համար, ապա Դրոշմի խորհրդով Սուրբ Հոգին եւ նրա շնորհները տրւում են քրիստոնեային՝ կեանքի մէջ զօրանալու, կեանքի բոլոր փորձութիւններին ընդդիմանալու համար*»[14]:

Պաւլիկեանները, մերժելով մկրտութեան խորհուրդը, որպէս այդպիսին համարել են Քրիստոսի խօսքերը՝ «*Ես եմ կենդանի ջուրը* (Յովհ. Դ. 10)»[15]: Իսկ թոնդրակեցիները, ըստ Գրիգոր Նարեկացու՝ Կճաւայ Վանքի միաբաններին գրած թղթի, չեն ընդունել «*Ծնունդն ի ջրոյ եւ ի հոգւոյ*», այսինքն՝ մկրտութեան խորհուրդը, որի մասին աղանդի հիմանդիր Սմբատ Զարեհաւանցին սովորեցրել է թէ այն «*լուալեաց ջուր է*»[16]:

Հայհոյատուների յաջորդ թիրախն է «զհրեշտակ»:

Ընտրութիւնը պատահական չէր. եթէ անարգում էին Աստծուն, ապա պէտք է պախարակէին նրա երկնային ներկայացուցիչներին, որոնք «*Հին Կտակարանում... հանդէս են գալիս իբրեւ ... միջնորդներ՝ հոգեւոր եւ նիւթական աշխարհների միջեւ*»[17]:

«*Լուսոյ հրեշտակները Աստուածութեան կամակատար, հոգեղէն, երկնաբնակ էակներ են..., որոնք կոչուած են սպասաւորել Աստծուն եւ մարդկանց*»[18]: Ենթադրելի է, որ հայհոյում էին նրանց նաեւ այն առաքելութեան համար, որ «*Երկնային կանխասահմանումով հրեշտակները տեւապէս փառաբանում են Աստծուն*»[19]:

Հայհոյախօսութիւնների շարքում հրեշտակին յաջորդում է «զքահանայ»: Պաշտօնական քրիստոնէութեան ամենավաղ ժամանակներից իվեր Աստծոյ ծիսակատար սպասաւորը, Նրա ու մարդկանց միջեւ միջնորդ հանդիսացողը, մեղքերին քաւութիւն տուողը՝ քահանան, որ յաւիտենական քահանայապետ Յիսուսի հաստատած քահանայութեամբ պէտք է աւետարանէր Տիրոջ իրագործած փրկագործութեան խորհուրդը, ով իրաւունք ունէր Քրիստոսից վստահուած իշխանութեամբ՝ «*մեղքի կապանքներից ապաշխարող մեղաւորներին արձակելու, Իր մարմնով ու արեամբ հաղորդութիւն տալու, հոտը հովուելու, Աստծոյ խօսքը քարոզելու, օրէնքները սովորեցնելու, մկրտելու, հիւանդներին այցելելու...*»[20]: Քահանան երբեմն իր կոչմանը եւ հոգեւորականին ոչ-յարիր կերպարի պատճառով մշտապէս եղել է բազմապիսի

քննադատութիւնների նշանակէտ, արհամարհուել, փնովուել, մերժուել աղանդաւորների կողմից:

Լեւոն Խաչիկեանը Մաշտոցեան Մատենադարանի «Կանոն Յաղագս Պէս-Պէս Յանցանաց» ձեռագրից աւելորդ չի համարել մէջբերել միջնադարեան քաղաքային բարքերով ախտոտուած հոգեւորականի հետեւեալ նկարագիը. «*Եւ լուաք վասն քահանայից, որք ի քաղաքի, եւ վասն սարկաւագաց, թէ առանց խտրութեանց յաւուրս պահոց ոչ արգելուն զինքեանս ի գինոյ, այլ եւ անչափ հագեցմամբ արբեցութեան ախտիւն հրապարակին ի մէջ գինարբուացն: Եւ անպարկեշտաբար նստին ի ժողովս, եւ խրախուսանան գուսանական երգով եւ կաքաւս լկտի խաղուց…*»[21]:

ԺԷ. կանոնի թուարկուած շարքում «զքահանայ» անարգանքից յետոյ յիշւում է «զբերան»: Սա սերտօրէն կապուած էր նախորդի հետ ու թիրախաւորուած էր հոգեւորականի՝ ժողովրդին ուղղուած պարզ, հասկանալի խօսքի, քարոզի դէմ, որ ունեցել են քրիստոնէական բարոյախրատական, բարոյադաստիարակչական նշանակութիւն եւ կարեւորագոյն տեղ միջնադարի մարդու կեանքում եւ առաջնային դեր նրա առօրեայ կենցաղում, ապրելա-կերպում:

Յաջորդ հայհոյանքը՝ «զերես», կարծում ենք, ուղղուած էր Աստծոյ արարչագործութեան պսակը հանդիսացող մարդու եւ նրա արտաքին տեսքի դէմ, որ յիշեցնում էր Արարչին, քանզի Նա մարդուն ստեղծեց իր պատկերով ու նմանութեամբ (Ծննդ. Ա. 26-27):

Շարքի վերջին յիշատակումը՝ «զգերեզման», կարծես, անդրշիրիմեան կեանքի, մեռեալների յարութեան, ահեղ դատաստանի հերքումն էր: Խաչիկեանի բնորոշմամբ. «*Միջնադարեան հերետիկոսական բոլոր դրոյթներից արմատականներից մէկն էլ անդրշիրիմեան կեանքի ժխտումն էր:*

Դժոխքը համարելով 'սուտ սպառնալիք միայն' այդ գաղափարախօսութեան հետեւորդները, բնականաբար, պէտք է իրենց ուշադրութիւնը սեւեռէին իրական կեանքի վրայ ու աշխատէին այնտեղ ստեղծել այն, ինչ եկեղեցին խոստանում էր տալ երկնային դրախտում…

Քրիստոնէական գաղափարախօսութեան հիմքում ընկած է երկու, իրար հակադիր կենաց գոյութեան դրոյթը: Պէտք է տոկալ, համբերել, մեռցնել անձը, արժանանալու համար յաւերժական-

երանաւէտ կեանքի անսպառ հաճոյքների վայելման թոյլ-տրուութեանը»[22]:

Շարքը եզրափակող «եւ այլն»ի ներքոյ պէտք է նկատի ունենալ, ինչպէս յուշում են Մխիթար Գօշի *Դատաստանագիրքն* ու Ձագավանքի ժողովի «Սահմանք»ը, *զսուրբ, զխաչ, զեկեղեցի*, որոնք ի հիմանց եղել են աղանդաւորական յարձակումների մշտական թիրախներ եւ աւելի արմատացել պալիկեան շարժման մէջ (չէր ընդունում սրբերի բարեխօսութիւնը, խաչը համարւում էր նզովքի արժանի գործիք, իսկ եկեղեցին՝ դեւերի կացարան):

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցին ի սկզբանէ անզիջում պայքար է մղել աստուածամարտական երեւոյթի եւ նրա դրսեւորումների դէմ: Գօշի *Դատաստանագրքի* ՁԸ գլուխը, որ կոչւում է «Յաղագս Դատաստանաց Հայհոյչաց Զանունն Աստուծոյ», սահմանում էր. «*...Եթէ ոք, շարժեալ ի սատանայէ, զանուն Քրիստոսի հայհոյէ, կամ զխաչ, կամ զեկեղեցի, կամ զքահանայ ի կռիւն իւրեանց, կամ զմկրտութիւն, եթէ մին յայլազգեաց իցէ, որպէս եւ անդ պատահեաց, եթէ քարկոծ առնել եւ եթէ՛ այլով աւրենակաւ՝ սպանանել արժան է, ապա թէ քրիստոնեայք՝ մահու դատաստան լիցի՝ քննելով զպատահումն*»[23]:

ԺԷ. կանոնի առաջին մասը խիստ պատիժներ է սահմանում հայհոյատուների նկատմամբ: Ընդ որում, նրանց դէմ եկեղեցականների պայքարին միացել են աշխարհիկ իշխանութիւններն ամենաբարձր մակարդակով: Կիլիկիայի բարձրաստիճան հոգեւորականներն Ամենայն Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդցու (1221-1267) գլխաւորութեամբ, ինչպէս կանոնում է ասւում, հոգացել են «*առաջի արքային Հեթմոյ եւ հօր իւրոյ Կոստանդեայ եւ ամենայն իշխանացն, եւ բանադրանօք բանադրեալ յամենեցուն վերայ, որ օգնական լինին եկեղեցւոյ, եւ յամենայն տեղի՝ ի մեծ եւ ի փոքր՝ յիշոցաւագ*[24] *դնեն ի դարպաս, ի քաղաք, ի գիւղս, ի բերդս, եւ յագարակս, եւ զանօրէն յիշոցասացսն, զաստուծոյ բարկութիւն շարժողսն, եւ զաններելի անօրէնսն... զայնպիսեացն զլեզուսն հատցեն, եւ կամ ծակեսցեն եւ լար ի ներս առցեն, եւ նախատանօք ի շուրջ ածցեն օր մի, եւ ըստ գոյին տուգանս առցեն, եւ յաղքատս տայցեն*»[25]:

Աստուածամարտների դէմ ԺԷ. կանոնով սահմանուած պատժամիջոցների՝ լեզուն կտրելու կամ այն ծակելու, լար անցկացնելու ու մէկ օր նախատինքով շրջեցնելու կապակցութեամբ Մաղաքիա Օրմանեանը գրում է. «*Այդ խիստ օրէնքը, որ իր բնութեամբ արեւելեան խստութեանց նմանութիւնն ունի, աւելի արեւմուտքի մէջ սկսած հաւատաքննական խստութեանց հետեւողութիւն պէտք է նկատուի*»[26]:

Այդ խիստ պատիժները, ինչպէս երեւում է, այնքան էլ արդիւնաւէտ չեն եղել, քանի որ Սմբատ Գունդստապլն իր *Դատաստանագիրք*ի (գրել է 1265ին) ԿԶ կանոնով, որ կոչւում է «Վասն Որ զԱստուած Հայիոյէ Կամ Անարգէ», աստուած հայհոյողներին դատապարտել է մահուան. «*Եթէ ոք զԱստուած հայհոյէ կամ անարգէ, նա զայտոր դատաստանն ինք Աստուած է հրամել ընդ Մովսէս, նա իրաւունք է, որ ի դուրս տանին ի դուր տեղ, եւ այնոք որ լսեցին՝ զձեռվին ի վերայ գլխոյն դնեն ու ի տեղն քարկոծեն զինք. եւ այս է դատաստանն նոցայ, թէ հարուստ լինայ եւ թէ տառպեալ. եւ որ չառնու զԱստուծոյ զճարն, թէ թագաւոր լինայ եւ թէ դատաւոր, նա Աստուծոյ եւ ի ժողովրդենէ առցէ զվրէժն: Զի եթէ ոք զՔրիստոս անարգէ, նոյն է՝ եւ զեկեղեցի, եւ զխաչ եւ զհաղորդն եւ զմկրտութիւն, եւ թէ անաւրէն լինայ, նա մեր է վրէժխնդրութեան. թէ քրիստոնէ է, եկեղեցին քննէ, եւ զոր պարտնէ ի դարպասն տայ որ դատէ*»[27]:

Սսի Բ. ժողովի յաջորդ՝ ԺԸ. կանոնից պարզւում է, որ աստուածամարտութեանը յարել են ոչ միայն աշխարհականներ, այլեւ հոգեւորականներ, որոնց՝ օրէնքը ամրագրել է. «*թէ քահանայ գտանի ի վերոգրեալ մեղսդ, կրկին պատիժ ընկալիցի եւ տանջեսցի կարգաւն հանդերձ*»[28]:

Յովհաննավանքի գաւթի մուտքի ճակատին Շահնշահ Ա. Զաքարեանի 1258ի իշխանապետական հրամանի 10-12րդ տողերում փորագրուած է. «...*եւ հաստատեցի, որ աբեղայ, որ այրող լինի կամ աղմուկ առնէ, գիշերաւթ չտան առնել, ստացուածն տէրունի եղիցի*...»[29]: Այս հատուածի կապակցութեամբ Կարօ Ղաֆադարեանը ենթադրում է, թէ «այրող *բառը, հաւանաբար, աղանդի անուն է ցոյց տալիս (կամ օրինազանց), այլապէս աղմուկ անողի (խռովարար, խառնակիչ, ապստամբ) հետ հաւասարապէս չէր պատժուի եւ անձնական ստացուածքն ամբողջովին պետութեան կողմից չէր բռնագրաւուի*»[30]:

Դեռեւս Շահապիվանի 444ի ժողովից սկսած բազմաթիւ են հոգեւորականների՝ սարկաւագների, աբեղաների, երէցների, անգամ եպիսկոպոսների՝ այս կամ այն աղանդին յարելու փաստերը: Քանի որ ԺԳ. դարի կէսին Հայաստանում մեծ տարածում ունեցող աղանդ չի եղել, հետեւապէս կարծում ենք, որ ի դէմս *այրող* աբեղայի, գործ ունենք հայհոյատուի հետ, որն իր աստուածամարտութիւնն ու անհաւատութիւնը ցայտուն կերպով արտայայտել է *Աստուածաշունչ*ի, կամ կրօնական, եկեղեցական, ծիսական որեւէ գրքի, գրուածքի ցուցադրական այրմամբ:

Աստուածամարտական երեւոյթի դէմ պայքար է տարուել ոչ միայն Կիլիկիայում, այլեւ բուն Հայաստանում: Այդ պայքարում ինչպէս Կիլիկիայում, Հայաստանում էլ եկեղեցուն օժանդակել են աշխարհիկ իշխանութիւններն ի դէմս հայոց մեծամեծ իշխանաւորների՝ տիկին Խոշաք Աւագեանի (Զաքարեան տոհմի Աւագեան ճիւղի գլխաւորը՝ 1250-1280ականներ, յետագայում՝ վրաց թագուհի), Պռոշ Խաղբակեան սպարապետի (1223-1284), Սադուն Արծրունի ամիրսպասալարի ու աթաբէկի (1263-1284) եւ Սմբատ Օրբէլեան Սիւնեաց գահերէցի (1253-1273), որոնք 1270ի Ձագավանքում Գրիգոր Բջնեցի Արարատեան եպիսկոպոսի նախաձեռնութեամբ ու առաջնորդութեամբ եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Յակոբ Ա. Կլայեցու (1268-1286) յանձնարարականով Վարդան Արեւելցու մասնակցութեամբ գումարում են տեղական եկեղեցական ժողով: Այդ գումարման «Սահմանք»ի կամ «Կանոնք»ի նախաբանում գրուած է այն հրաւիրելու պատճառը. «… *այս: Որ անտառացեալ էր խորհուրդ եկեղեցւոյ եւ աստուածեղէն հաւատ եւ պատիւ քրիստոնէութեան, ամենայն բարի պակասեալ էր եւ սատանայ իւր ոտիւքն ամենայն մեղօք կախեալ էր զքրիստոնէական հաւատս, առաւել անքաւելի մեղօք եւ չարաչար հերձուածովք, որ քան զամենայն հերձուած լեղի է, մինչեւ ցայս, զի ժողովօք նզովեալ են չարագոյն յիշունցնատուքն, որ զամենայն մոռացեալ մեղք եւ չարիք յիշել տան Աստուծոյ, հրեշտակաց եւ բոլորից սրբոց, եւ դողացուցանեն զարարածս Աստուծոյ եւ գարշելի եւ զազիր հոգով լնուն երկիր: Եւ չտան տեսնել արարչին իւր ողորմած աչօքն զիւր արարածս եւ արգելուն զսուրբ Աստուծոյ բարեխօսել վասն աշխարհի, ուր քրիստոսական անունն եւ անճառ խորհուրդ քրիստոնէութեանս հայհոյի: Զի այս է, որ ասաց Քրիստոս, թէ որ*

զհոգին սուրբ հայհոյէ, մի՛ թողցի նմա մի յայսմ աշխարհի եւ մի ի հանդերձելումն»[31] (Մատթ. ԺԲ. 32):

Այնուհետեւ նշւում է, թէ ինչ պատիժների են դատապարտւում հայհոյատուները. «*Որ յայսմ աշխարհի չէ տուեալ ումեք իշխանութիւն թողուլ յիշնցնապուին, ոչ կաթուղիկոսի, եպիսկոպոսի, ոչ վարդապետի, ոչ քահանայի, եւ յայնմ աշխարհին ոչ ոք իշխէ բարեխօսել, ոչ հրեշտակ եւ ոչ սուրբք ամենայն: Այլ ի յաշխարհասպեղծ բերանոյն հեպ դիւաց անիծօք ի հուր գեհենոյ եւ երթան, յանշիջանելի եւ այս կեանքս ամենայն սուրբք նզովեալ են. Մովսէսի նզովեալ է յիշնցնապուն եւ իւր ապրանքն զամէն, զնստելն եւ զառնելն, եւ ի կարգն ամենայն սուրբք: ԶԱստուծոյ հայհոյիչն ով չնզովէ եւ դողացուցիչն աթոռոյն Աստուծոյ: Երբ կաթուղիկոս եւ եպիսկոպոս, վարդապետ եւ երէց չունի իշխանութիւն թողուլ յիշնցնապուին մեղք. յայտ է, որ յիշնցնապուքն անիծած են յԱստուծոյ, կաթուղիկոսէ եւ եպիսկոպոսէ եւ վարդապետէ եւ քահանայէ»*[32]:

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Նախաբանի վերջում ժողովականները սահմանում են կանոններ վերը թուարկուածների նման. «*Կաթուղիկոս եւ եպիսկոպոս կամ վարդապետ կամ երէց չունի իշխանութիւն զյիշնցնապուն կամ օրհնել կամ հաղորդել կամ թաղել, կամ զտղայսն կնքել կամ պսակել, որ չտան զսրբութիւն շանց, եւ ինքնեանք ընդ նոսա նզովին, զի որ քրիստոնեայ անարգէ, զԱստուած անարգէ, որ քրիստոնեայ հայհոյէ, զՔրիստոս հայ-հոյէ…»*[33]:

Զագավանքի ժողովի երեք խումբ կանոններից առաջինը, որ կոչւում է «Հասարակաց Կանոնք Վասն Աշխարհականաց Քրիստոնէից», սկսւում է աստուածամարտութիւնը դատապարտող օրէնքով.

«*Ա. Առաջին այս պահուի, որ զահաւոր անունն Աստուծոյ ի վեր առնուն յիշնցնապուացն, դեւ եւ սատանայ կոչեն, զի զԱստուած այլ ո՞վ իշխէ հայհոյել քան զսատանայ, չունի հրաման յԱստուծոյ յիշնցնապուն, որ քրիստոնեայ կոչէ զինքն, կամ այլ ով ոքմին հայր կամ մայր կամ եղբայր, կին կամ սիրելի, դեւ է եւ սատանայ եւ անիծած. մեք չենք միայն անիծել, ամենայն սուրբք են անիծել եւ ինքն Աստուած»*[34]:

Բ. կանոնով հայհոյողին, ինչպէս եւ այլադաւանին ու շնացողին, արգելւում է կնքահայր լինել: Հետաքրքրական է, որ նոյն կանոնի վերջում մկրտութեան աւարտին երէցը պէտք է հարցնի. «*թէ հաւատա՞ս ի յարութիւն մեռելոց», ապա «ի շուռ գայ ի վերայ ժողովրդեանն եւ ասել տայ ծնողացն*»[35]:

Բ. կանոնի վերջնամասը, կարծում ենք, նպատակաուղղուած էր գերեզմանի դէմ հայհոյախօսութեանը:

Ուշադրութեան արժանի է այն, որ Ձագավանքի ժողովն ի տարբերութիւն Սսի, հայհոյատուների նկատմամբ մարմնական պատիժներ չի սահմանում՝ բաւարարուելով միայն նզովքներով ու կանոնական արգելքներով:

Այդուհանդերձ, եկեղեցու ու իշխանութիւնների ջանքերն ապարդիւն չեն անցել եւ յաջողուել է կասեցնել աստուածամարտ հայհոյատուների հերձուողական յետագայ դրսեւորումները:

Ինչ վերաբերում է այդ աստուածամարտական երեւոյթի ի յայտ գալու ժամանակին ու պատճառներին, ապա առկայ փաստերը ենթադրել են տալիս, որ այն ծագել է ԺԲ. դարավերջերին, տարածուել ու խորացել ԺԳ. դարում՝ Հայաստանում օտար տիրապետողների հարստահարումների արդիւնքում: Սելջուկեան աւելի քան մէկուկէս դարեայ դժնդակ լուծը թօթափած հայ ժողովուրդը, որը Զաքարեան իշխանապետերի գլխաւորութեամբ կերտում էր անկախութեան միտուած իրականութիւն, յանկարծ պատուհասւում է խորասանցիների վայրագ ասպատակութիւններով (1225-1232ին), յետոյ էլ՝ մոնղոլ-թաթարական վերահաս արշաւանքներով (1236ին): Երկրում ստեղծւում է մի իրավիճակ, որն ամենամռայլ գոյներով է ներկայացնում ականատես պատմիչ Կիրակոս Գանձակեցին. «*Սէր ցամաքեալ, եւ անգթութիւն փիրեալ, աստուծապաշտութիւն նուազեալ, եւ անհաւատութիւն բարձրացեալ. սեղանք եւ պատարագք լռեալք, եւ քահանայք անողորմ ի սուր անկեալք. կանայք եւ մանկունք գերեալք, եւ արք դառնամահք լեալք. զի՝ զոր գուշակեաց այրն աստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին նեփողաց եւ աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէ, որ թաթարն կոչի, զի զբազում ազգս եւ զազինս ջնջեաց սա...*»[36]: Պատերազմների, արիւնահեղութեան, աւերի, թալանի եւ այլ բռնութիւնների պատճառով Հայաստանից սկսւում է զանգուածային արտագաղթ դէպի խաղաղ, ապահով ու բարեկեցիկ Կիլիկիայի հայկական թագաւորութիւն: Կիլիկիա

արտագաղթողների մէջ էին, անշուշտ, նաեւ հայհոյատուներ, որոնք էլ նոր միջավայրում՝ ազգակիցների շրջանում՝ տարածեցին իրենց հակակրօնական գաղափարներն այն աստիճան, որ անհանգստանալու առիթ տուեցին եկեղեցուն: Վերջինս էլ աշխարհիկ բարձրագոյն իշխանութիւնների հետ դաշնակցած՝ ձեռնամուխ եղաւ նոր բուսած չարիքների դէմ պայքարելուն, ինչպէս նշուած է Սսի Բ. ժողովի՝ մեզ յայտնի կանոնում:

Այդ ընթացքում աշխարհակալ մոնղոլների՝ «ազգն նետողաց», որ «*փիրեց չորից ծագաց երկրի յարեւելից մինչեւ յարեւմուտս*»[37] եւ «*փիրեալ էր ...բազում աշխարհաց եւ մինչեւ յովկիանոս ծովն եւ Սպամպալն, ի Պոնտոս եւ մինչեւ զգետն Եփրատես, փիրելով գոռոզաբար եւ ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան, զմեծամեծս եւ զփոքունս ի մահ եւ ի գերութիւն մատնելով, յայսմ ժամանակի դառնութեան...*»[38] պատճառով Հայաստանի «*տնտեսական կեանքը խոր անկում ապրեց, որի հետեւանքով երկրում թագաւորեցին սովն ու համաճարակը*»[39]: Ըստ պատմական աղբիւրների (Գանձակեցի, Ֆրիկ, Վարդան Այգեկցի)՝ «*Հքաւորներից, որոնք չէին կարողանում վճարել հարկը, վերցնում էին երեխաներին, կանանց կամ իրեն՝ գիւղացուն եւ յաճախ վաճառում սպրկութեան: Եւ որ ոչ կարէր հատուցանել զսակս, զմանուկս նոցա այսպիսի առնուին ընդ պարտուցն...*»[40]:

Ահա այսպիսի դաժան իրավիճակում, ինչքան ուժգնանում էին բռնութիւնները՝ պատճառ դառնալով համընդհանուր թշուառութեան, յուսալքութեան, այնքա՛ն սաստկանում էին աստուածամարտների հայհոյախօսութիւնները: Որքան շատանում էին ճնշումները, այնքան խորանում էր յուսահատութիւնը, զանգուածային բնոյթ դառնում հայրենալքութիւնը, արտագաղթը: Երկիրը մարդաթափւում էր, երբեմնի շէն բնակավայրերը ամայանում էին, նախկինում բերրի դաշտերը դառնում էին քոչուոր անասնապահների ձմեռային արօտավայրեր, Հայաստան էր հետզհետէ թափանցում օտար քոչուոր տարրը՝ խախտելով նրա ազգային միատարրութիւնը[41]:

Հայոց Եկեղեցին չէր կարող անտարբեր գտնուել սեփական երկրի ու հարազատ ժողովրդի ճակատագրի հանդէպ: Անհրաժեշտ էր մխիթարել, յուսադրել մարդկանց, նրանց հաւատը խորացնել՝ տոկուն դարձնելու համար, համբերութեան կոչել՝ լաւ օրերի սպասումով: Երկրում օրախնդիր էր՝ անյապաղ ցրել

համատարած յուսալքութեան մթնոլորտը, որ աւելի էր գաղջանում աստուածամարտական հայհոյախօսութիւնների պատճառով: Հարկաւոր էր վերջ տալ այդ հայհոյախօսութիւններին: Եւ հայոց եկեղեցուն, դատելով աղանդաւորութեան պատմութեան յետագայ ընթացքից, յաջողուեց լուծել այդ խնդիրը՝ թոյլ չտալով, որ աստուածամարտութիւնը վերածուի կազմակերպուած աղանդի ու գոյատեւի: Աստուածամարտական հայհոյախօսութիւնները, որ օտար, դաժան տիրապետութիւնների պատճառած յուսալքութեան ծնունդ էին, բարեբախտաբար խորթացան հայ աստուածավախ մարդկանց միջավայրում, արտայայտուած ձեւով սահմանափակուեցին միայն ԺԳ. դարով եւ չունեցան պատմական յետագայ շարունակութիւն: Նաեւ աստուածամարտական երեւոյթը կորցրեց իր հրատապութիւնը, քանի որ Հայոց Եկեղեցին կանգնեց կրօնական նոր մարտահրաւէրների դէմ, այս անգամ՝ արտաքին, որ գալիս էին Արեւմուտքից՝ ծիսական ու դաւանաբանական լատին նորամուծութիւններ ընդունելու պարտադրմամբ եւ յայտնուեց ազգային հոգեւոր դիմագիծն ու ինքնիշխան անկախութիւնը կորցնելու վտանգը չէզոքացնելու հիմնախնդրի առջեւ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Թադէոս Աւդալբէկեան, *Անյայտ Աղանդաւորներ Հայոց Մէջ ԺԶ. Ու ԺԵ. Դարերում*, Վիեննա, Մխիթարեան Միաբանութեան Հրատ., 1926, էջ 25:

[2] Նոյն, էջ 37:

[3] Բ. Վրդ. Աղաւելեանց, *Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից*, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ, 1905, էջ 115:

[4] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1961, էջ 307: Մէկ այլ տեղ այդ կանոնը դրուած է ԺԵ.ի ներքոյ (*Կանոնագիրք Հայոց*, խմբեց Ա. Ղլտճեան, Թիֆլիս, Էլեքտրատպարան Օր. Ն. Աղանեանի, 1917, էջ 177):

[5] Գանձակեցի, 1961:

[6] Գարեգին Յովսէփեանց, *Ջագավանից Ժողովը*, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1913, էջ 42: Հմմտ.՝ *Կանոնագիրք Հայոց*, էջ 181:

[7] Յովսեփեան, էջ 37:

[8] *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց*, Երեւան, Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութեան Հրատ., 1997, էջ 295:

[9] Նոյն, *Նոր Կտակարան*, էջ 159:

[10] Նոյն, էջ 273:

[11] Նոյն:

[12] Նոյն:

[13] *Մատենագիրք Հայոց, Հտր. Է.*, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2007, էջ 37:

[14] *Քրիստոնեայ Հայաստան Հանրագիտարան*, Երեւան, Հայկական Հանրագիտարանի Գլխաւոր Խմբագրութեան Հրատ., 2002, էջ 282:

[15] Ե. Տէր-*Մինասեան*, Միջնադարեան *Աղանդների Ծագման Եւ Զարգացման Պատմութիւնից*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1968, էջ 123:

[16] Նոյն, էջ 154:

[17] *Քրիստոնեայ Հայաստան Հանրագիտարան*, էջ 640:

[18] Նոյն, էջ 641:

[19] Նոյն:

[20] Նոյն, էջ 1047-1048:

[21] Լ. Խաչիկեան, «Աղանդաւորական Գաղափարախօսութիւնը Հայաստանում 12-14րդ Դարերում», *Աշխատութիւններ, Հտր. Գ.*, Երեւան, «Նաիրի» Հրատ., 2008, էջ 448:

[22] Նոյն, էջ 455:

[23] Մխիթար Գօշ, *Գիրք Դատաստանի*, աշխ.՝ Խ. Թորոսեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 645:

[24] Վարագ Առաքելեանը «Յիշոցաւագ»ը թարգմանել է Յիշոցապետ եւ բացատրել. «*Անձինք, որոնք բռնում են հայհոյողներին եւ յանձնում իշխանութիւններին*» (Կիրակոս Գանձակեցի, *Հայոց Պատմութիւն*, թարգմ. եւ առաջ. եւ ծանօթ. Վ. Առաքելեան, Երեւան, 1982, «Սովետական Գրող» Հրատ., էջ 220, տողատակ):

[25] Գանձակեցի, 1961, էջ 306-307:

[26] Մաղաքիա Օրմանեան, *Ազգապատում*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռի Հրատ., 2001, էջ 1906-1907:

[27] Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք*, հաւաքական տեքստը, ռուս. թարգմ. եւ ծանօթ.՝ Ա. Գալստեան, Երեւան, Հայպետհրատ, 1958, էջ 208:

[28] Գանձակեցի, 1961, էջ 307:

[29] Կարօ Ղաֆադարեան, *Յովհաննավանքը Եւ Նրա Արձանագրութիւնները*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1948, էջ 98:

[30] Նոյն, էջ 99:

[31] Յովսէփեան, էջ 41-42. նաեւ՝ *Կանոնագիրք Հայոց*, էջ 181: Աշխարհաբար թարգմանութիւնը տե՛ս՝ Ս. Մխիթարեան, «Ձագավանքի Ժողովը Եւ Իր Կանոնքը», *Հայ Աստուածաբան*, Ե., Երեւան, 2013, էջ 103-110:
«Կանոնք» Բարսղի Կեսարացւոյ ՄՀԱ կանոնում խօսւում է, «որք զՀոգին Սուրբ հայհոյեսցեն», նրանց մեղքերին թողութիւն չի տրւում, նրանք ցմահ զրկւում են հաղորդութիւն ստանալուց դարձի չգալու դէպքում: Եթէ Սուրբ Հոգին հայհոյողները հոգեւորականներ էին, ապա նրանք անմիջապէս կարգալոյծ էին արւում (*Կանոնագիրք Հայոց*, Բ., աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1971, էջ 179): Այս կանոնը, անշուշտ, ուղղուած էր Եւստաթիոս Սեբաստացու ու Մակեդոնի դէմ, որ մերժում էին Սուրբ Հոգու աստուածութիւնը:

[32] Յովսէփեան, նոյն. նաեւ՝ *Կանոնագիրք Հայոց*, էջ 181, 182. նաեւ՝ Մխիթարեան, էջ 104-105:

[33] Նոյն:

[34] Յովսէփեան, էջ 43. նաեւ՝ *Կանոնագիրք Հայոց*, էջ 183. նաեւ՝ Մխիթարեան, էջ 105:
[35] Նոյն:
[36] Գանձակեցի, 1961, էջ 9:
[37] Տե՛ս արձանագրութիւնը՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ IX, Լոռու Մարզ*, կազմեցին Ս. Բարխուդարեան, Կ. Ղաֆադարեան, Ս. Սաղումեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2012, էջ 382:
[38] Տե՛ս արձանագրութիւնը՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V, Արցախ*, կազմեց Ս. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 224:
[39] *Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հտր. III*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1976, էջ 668:
[40] Նոյն, էջ 665:
[41] Նոյն, էջ 668:

THEOMACHY IN ARMENIA IN THE XIII CENTURY
(Summary)

ASHOT MANUCHARYAN
muradyan.tigranuhi@mail.ru

The canons from the councils held in Sis (in 1243) and in Dzagavan (in 1270) verify the existence of a heretical movement in the XIII century in Armenia. It is called a "theomachy movement" as the adherents expressed outrage against God, faith, angels, baptism, priests, graves, etc. This unprecedented phenomenon is explained by the hopelessness caused by the brutal and heavy rule of the Selcuks and the Mongol-Tartars.

The Armenain Church had no choice but to involve high ranking clerics and lay authorities to address and fight this issue.

The adherents, among whom were monks, were subjected to both physical and canonic punishment, such as cutting of the tongue or piercing it with wire and pulling them within the settlement for one day, fining them in favor of the poor, anathematizing them, depriving them of Communion and Baptism, denying them a Christian burial ceremony, etc.

The fight against this phenomenon proved successful as the trend was stopped in the XIII century.